



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2020 թվականի թիվ 7-Ա

ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ
ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ
ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասի, «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից քարոզչության կողմերի համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը»՝ համաձայն հավելվածի:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

14 փետրվարի 2020թ.
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԵԹԵՐԱՅԻՆ
ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի (այսուհետ՝ Հանրաքվե) քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) հեռարձակած ծրագրերի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությանը համապատասխանության մշտադիտարկումն իրականացնում է՝ հիմք ընդունելով հետևյալը.
 - հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) անմիջական դիտարկման արդյունքները.
 - գրանցամատյանների և ընկերություններից ստացված տեղեկատվությունը.
 - քարոզչության կողմերի, պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների Հանձնաժողով ներկայացրած պաշտոնապես տեղեկատվությունը:
2. Քարոզչության կողմերին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամի մշտադիտարկումն իրականացվում է «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
3. Դիտարկողը գնահատում է՝
 - վճարովի եթերաժամի սակագնի և հայտարարման ժամկետի օրենքի պահանջներին համապատասխանությունը.

- Հանրաքվեի քարոզչության ընթացքում սակագնի անփոփոխությունը.
- տրամադրվող եթերաժամանակի և դրա հեռարձակման ժամի համապատասխանությունը.
- Քարոզչության կողմերի ներկայացրած նյութի հեռարձակելը մերժելու հիմքերի իրավաչափությունը, եթե Ընկերությունները մերժել են այդ նյութի տեղադրումը (պատշաճ հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը):

4. Ընկերությունների կողմից հեռարձակված հեռուստառադիոծրագրերը ուսումնասիրելիս, բացառությամբ քարոզչության կողմերին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի, ինչպես նաև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 58-61-րդ հոդվածներով խախտման արձանագրություն կազմելիս, դիտարկողը գնահատում է՝

- լրատվական թողարկումներում և հասարակական-քաղաքական հաղորդումներում Հանրաքվեի քարոզչության միջոցառումների լուսաբանման գնահատականներից գերծ և անկողմնակալ լինելու հանգամանքը, հավասարության և ոչ խտրական սկզբունքի պահպանումը.
- Հանրաքվեի քարոզչություն իրականացնող քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող անձի գործունեության լուսաբանման համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի պահանջներին, պաշտոնական և այլ գործունեության լուսաբանման տարանջատվածությունը.
- Հանրաքվեի քարոզչության կողմերին Ընկերությունների կողմից հեռարձակվող հաղորդումներում և հաղորդաշարերում մասնակցության հավասար հնարավորություն ընձեռելու հանգամանքը.
- Հանրաքվեի քարոզչություն կատարողի մասնակցությամբ հաղորդումներում և հաղորդաշարերում լրագրողի, հեռուստառադիոհաղորդումը վարողի, եթերում հանդես եկող ընկերության աշխատակցի անկողմնակալ լինելու հանգամանքը.
- գեղարվեստական, փաստավավերագրական, անիմացիոն ֆիլմերում, տեսահոլովակներում, ձայնագրություններում, առևտրային գովազդում, ընկերության այնպիսի հաղորդումներում, որոնք նվիրված չեն Հանրաքվեի լուսաբանմանը, այդ թվում՝ նաև ինտերակտիվ եղանակով, քարոզչություն իրականացնելու հանգամանքի առկայությունը (կողմ կամ դեմ քվեարկելու կոչով հանդես գալը), անվճար և վճարովի եթերաժամանակից օգտվող ՀՀ Ազգային ժողովի ուժերի խորհրդանիշերի և կարգախոսերի առկայությունը.

- վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման համապատասխանությունը «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջներին.
- Հանրաքվեի քվեարկության օրը մինչև ժամը 20.00-ն ընտրողի տված քվեի մասին հարցման հրապարակման առկայության հանգամանքը.
- Հանրաքվեի քվեարկության օրը և դրան նախորդող օրը քարոզչական նյութի՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչության իրականացման առկայության հանգամանքը:

5. Հանրաքվեի քարոզչության ընթացքում և դրա ավարտից հետո հաշվարկվում են՝

- Հանրաքվեի քարոզչության ընթացքում քարոզչության կողմերից յուրաքանչյուրին առանձին Ընկերությունների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը .
- Հանրաքվեի քարոզչության ընթացքում քարոզչության կողմերին բոլոր Ընկերությունների կողմից անվճար և վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը.
- Հանրաքվեի քարոզչության կողմերից յուրաքանչյուրին առանձին Ընկերությունների կողմից տրամադրված ընդհանուր եթերաժամանակը, ինչպես նաև Հանրաքվեի քարոզչության կողմերի վճարովի եթերը, լրատվական և այլ հաղորդումներին մասնակցության ընդհանուր տևողությունը.
- Հանրաքվեի քարոզչության ընթացքում Հանրաքվեի քարոզչության կողմերից յուրաքանչյուրին բոլոր Ընկերությունների կողմից տրամադրված ընդհանուր եթերաժամանակը, ինչպես նաև Հանրաքվեի քարոզչության կողմերի վճարովի եթերը, լրատվական և այլ հաղորդումներին մասնակցության ընդհանուր տևողությունը: